


«29»



«ՀՀ մշակույթի նախարարի
2012թ. N 514-Վ հրամանի»

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՇԵՍՏՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի (այսուհետ՝ Նախարարի) հրամաններով:

3. Վարչությանը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Վարչությանը կանոնադրությունը, կառուցվածքը հաստատում (փոփոխում) է Նախարարը:

5. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության խնդիրներն են.

1) նպաստել մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների պահպանությանը, պաշտպանությանը, ուսումնասիրությանը, օգտագործմանը, հանրահռչակմանը, զրգացմանը ու ծառայությունների մատուցմանը,

2) ստեղծել ազատ ու մատչելի ծառայությունների մատուցման պայմաններ, մշակութային արժեքներին հաղորդակցվելու նպատակով.

3) միջազգային պայմանագրերի շրջանակներում այլ պետությունների տարածքներում գտնվող ազգային մշակութային ժառանգության պահպանությանը նպաստելը:

III ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում է մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների (այսուհետ՝ ժառանգություն) ոլորտի հայեցակարգերի, ռազմավարության, ժառանգությունը և ժողովրդական արհեստների կարգավորող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծեր, ինչպես նաև Նախարարին և Աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ գործող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին, ապահովում իրավական ակտերի կիրարկումը.

2) մշակում է մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների ոլորտի պետական, նպատակային ու զարգացման կարճաժամկետ ծրագրեր, առանձին միջոցառումներ և դրանց իրականացման ձևերն ու կարգերը և նպաստում դրանց իրականացմանը:

3) մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ ժառանգության և ժողովրդական արհեստների ոլորտի մասով ներկայացնում է առաջարկություն՝ միջնաժամկետ և տարեկան բյուջետային ծախսային ծրագրի, Նախարարության գործունեության տարեկան ծրագրի, պետական պատվերի ձևավորման վերաբերյալ.

4) ապահովում է մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների բնագավառի պետական քաղաքականության վերլուծությունը, ուսումնասիրում զարգացման միտումները և օրինաչափությունները և առաջարկություններ է ներկայացնում դրա կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի ու կարգերի բարելավման վերաբերյալ.

5) մշակում է մշակութային ժառանգությանը և ժողովրդական արհեստներին վերաբերող մեթոդական ցուցումներ, պարզաբանումներ, ուղեցույցներ, արժեքների գրանցման,